ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՀՈՒՅՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ԵՊՀ-ԳՀԱՇՁԲ-19/117»

ք. Երևան «24» հուլիսի 2019 թ.

«Երևանի պետական համալսարան» Հիմնադրամն ի դեմս պրոռեկտոր Ա. Մալխասյանի, որը գործում է Հիմնադրամի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և Արգավանդ Կահույք ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Վ. Նարիբեկյանի, որը գործում է ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի,

2.1.8 Ջննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 36 930 360 (երեսունվեց միլիոն իննը հարյուր երեսուն հազար երեք հարյուր վաթսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[20] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[21]

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը,

---

[20] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*
Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

[21] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

8.7 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.8 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.10 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.11 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.12 Պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«ԵՊՀ» հիմնադրամ	Արգավանդ Կահույք ՍՊԸ
ք. Երևան, Ալեք Մանուկյան 1	ՀՀ ք.Երևան, Անդրանիկի 129, բն. 4
«Արդշինբանկ» ՓԲԸ	"Հայէկոնոմբանկ" ԲԲԸ Մետաքս Մ/Ճ
ՀՎՀՀ 01506928	Հ/Հ 163218020242
Հ/Հ 247010000906	ՀՎՀՀ 01261634
պրոռեկտոր՝ Ա. Մալխասյան	տնօրեն՝ Վ. Նարիբեկյան
_____	_____
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
«24» հուլիսի 2019 թ. կնքված
«ԵՊՀ-ԳՀԱՊՁԲ-19/117» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի												
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը	արտադրողի անվանումը և ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման			
									հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը	
1	39141170/1	Մահճակալ	ՀՀ	Չափերը 204 x94 x32 սմ: Պատրաստված է 1,8 սմ հաստությամբ լամինացված ՓՏՍ-ից: Գլխավերևի չափսերը 94 սմ լայնք 90 սմ բարձրություն: Ներքևի հատվածը 94x32 սմ, ներքնակի տակի հիմքը ոչ լամինացված ՓՏՍ-ից, վրան անցքերով օդափոխության համար: Կողադիրները ամուր հիմքով, երևացող կողմերը եզրափակված են ՊՎՍ-ով: Ըստ ներկայացված գծագրի **Ամբողջ կահույքը լինի միագույն, /գույնի նմուշը կտրամադրի պատվիրատուն՝ բաց շականակագույն:**	հատ	19590	6543060	334	***ք. Երևան, Ծարավ աղբյուրի 55 ա***	334	օգոստոս-սեպտեմբեր 2019 թ.	
3	39111140/1	Աթոռ	ՀՀ	Աթոռի չափերը 50x40x100սմ: Նստատեղը գետնից 45 սմ է: Պատրաստված է բարցրորակ աճառե փայտից, 4 հանգույցները առանձին իրար հետ կապված; նստատեղը և մեջքը փափուկ, սպունգե բարցր խտության, կտորը բարցրակարգ և ուշ մաշվող, հանգույցները չերևացող, ներկանյութը լաքապատումը բարցր կարգի	հատ	9480	5498400	580	***ք. Երևան, Ծարավ աղբյուրի 55 ա***	580	օգոստոս-սեպտեմբեր 2019 թ.	

				եվրոպական արտադրության ներկալաքա նյութետով: **Ամբողջ կահույքը լինի միագույն, /գույնի նմուշը կտրամադրի պատվիրատուն՝ բաց շականակագույն:**							
5	39141170/3	3 տեղանոց ննջասենյակի կահույք – 1-ին տարբերակ	<<	**Զգեստապահարան 3 հատ** - Ընդհանուր չափերը 2 մ 10սմ x 90 սմ x 60 սմ բաղկացած է 2 կտորից 155 x90 x60 սմ և 55x 90 x60 սմ: Պատրաստված է 18 մմ լամինացված ՓՏՍ –ից,երևացող եզրերը եզրապատված՝ ՊՎՍ-ով: Առաջին կտորը 2 դռնանի է և բաժանված է 2 մասի: Առաջին մասում կա մետաղական ձող հագուստը կախելու համար, երկրորդ մասը բաղկացած է 2 դարակներից և ցածր մետաղական ձողից՝ շապիկների համար: Բոլոր բաց մասերը փակված են եզրաժապա-վենով:Երկրորդ վերևի կտորը ունի երկու փակ դուռ և մեկ դարակ: Ունի 4 բռնակներ՝ եվրոպական արտադրու-թյան, մետաղյա; Մանեկահեղյուսային միացումները եվրոպական արտադրության, չերևացող: Ետնամասը ծածկված է լամինացված ԴՎՊ-ով: Ծխնիները եվրոպական արտադրության: ըստ ներկայացված գծագրի: **Գրասեղան 3 հատ** - Պատրաստված է 18մմ հաստությամբ լամինացված ՓՏՍ-ից: Սեղանի չափերը 110 x60 x75 սմ: Սեղանը ունի 1 գզրոց: Գզրոցը վերևի մասում ունի շարժական դարակ, որի մեխանիզմը եվրոպական արտադրության սահուդիով է, ունի 1 դուռ իր 1 դարակով: Գզրոցի հետևի պատը լամինացված ԴՎՊ –ով է: Բոլոր բաց եզրերը եզրապատված են ՊՎՍ-	հատ	210000	420000	2	*ք. Երևան, Ծարավ աղբյուրի 55 ա*	2	օգոստոս-սեպտեմբեր 2019 թ.

				ով: Մանեկահեղյուսային միացումները եվրոպական արտադրության են և չերևացող, 2 բռնակները մետաղյա են և խրոմապատ: ըստ ներկայացված գծագրի: **Կախիչ 1 հատ** - Պատրաստված է 18մմ հաստությամբ բարձորակ լամինացված ՓՏՍ-ից: Չափերը՝ 90 x30 x160 սմ 18 մմ հաստությամբ: Կախիչը ունի 2 բաց դարակ՝ վերևի և ներքևի. 4 հատ հագուստի կախիչ, որոնք երկաթից են և խրոմապատ: Բոլոր բաց եզրերը եզրապատված են ՊՎՍ-ով: Մանեկահեղյուսային միացումները չերևացող են: ըստ ներկայացված գծագրի. **Ամբողջ կահույքը լինի միագույն, /գույնի նմուշը կտրամադրի պատվիրատուն՝ բաց շականակագույն:**							
6	39141170/4	3 տեղանոց ննջասենյակի կահույք - 2-րդ տարբերակ	<<	**Զգեստապահարան 3 հատ** - Ընդհանուր չափերը 2 մ 10սմ x 90 սմ x 60 սմ բաղկացած է 2 կտորից 155 x90 x60 սմ և 55x 90 x60 սմ: Պատրաստված է 18 մմ լամինացված ՓՏՍ –ից,երևացող եզրերը եզրապատված՝ ՊՎՍ-ով: Առաջին կտորը 2 դռնանի է և բաժանված է 2 մասի: Առաջին մասում կա մետաղական ձող հագուստը կախելու համար, երկրորդ մասը բաղկացած է 2 դարակներից և ցածր մետաղական ձողից՝ շապիկների համար: Բոլոր բաց մասերը փակված են եզրաժապավենով:Երկրորդ վերևի կտորը ունի երկու փակ դուռ և մեկ դարակ: Ունի 4 բռնակներ՝ եվրոպական արտադրության, մետաղյա; Մանեկահեղյուսային միացումները եվրոպական	հատ	219900	439800	2	***ք. Երևան, Ծարավ աղբյուրի 55 ա***	2	օգոստոս-սեպտեմբեր 2019 թ.

				արտադրության, չերևացող: Ետնամասը ծածկված է լամինացված ԴՎՊ-ով: Ծխնիները եվրոպական արտադրության: ըստ ներկայացված գծագրի: **Գրասեղան 3 հատ** - Պատրաստված է 18մմ հաստությամբ լամինացված ՓՏՍ-ից: Սեղանի չափերը 110 x60 x75 սմ: Սեղանը ունի 1 զզրոց: Գզրոցը վերևի մասում ունի շարժական դարակ, որի մեխանիզմը եվրոպական արտադրության սահուղիով է, ունի 1 դուռ իր 1 դարակով: Գզրոցի հետևի պատը լամինացված ԴՎՊ –ով է: Բոլոր բաց եզրերը եզրապատված են ՊՎՍ-ով: Մանեկահեղյուսային միացումները եվրոպական արտադրության են և չերևացող, 2 բռնակները մետաղյա են և խրոմապատ: ըստ ներկայացված գծագրի: **Կախիչ 1 հատ** - Պատրաստված է 18մմ հաստությամբ բարձորակ լամինացված ՓՏՍ-ից: Չափերը՝ 90 x30 x160 սմ 18 մմ հաստությամբ: Կախիչը ունի 2 բաց դարակ՝ վերևի և ներքևի. 4 հատ հագուստի կախիչ, որոնք երկաթից են և խրոմապատ: Բոլոր բաց եզրերը եզրապատված են ՊՎՍ-ով: Մանեկահեղյուսային միացումները չերևացող են: ըստ ներկայացված գծագրի. **Կողապահարան 3 հատ** - Պատրաստված է 18մմ հաստությամբ լամինացված ՓՏՍ-ից: Չափերը՝ 45x40x50 սմ: Բոլոր բաց կողերը եզրապատված են ՊՎՍ-ով, ունի 1 բաց դարակ: Բոլոր միացումները չերևացող հեղյուսամանեկային միացումներով են: ըստ ներկայացված գծագրի:							

				Ամբողջ կահույքը լինի միագույն, /գույնի նմուշը կտրամադրի պատվիրատուն՝ բաց շականակագույն:							
7	39141170/5	3 տեղանոց ննջասենյակի կահույք – 3-րդ տարբերակ	ՀՀ	**Զգեստապահարան 3 հատ** - Ընդհանուր չափերը 2 մ 10սմ x 90 սմ x 60 սմ բաղկացած է 2 կտորից 155 x90 x60 սմ և 55x 90 x60 սմ: Պատրաստված է 18 մմ լամինացված ՓՏՍ –ից,երևացող եզրերը եզրապատված՝ ՊՎՍ-ով: Առաջին կտորը 2 դռնանի է և բաժանված է 2 մասի: Առաջին մասում կա մետաղական ձող հագուստը կախելու համար, երկրորդ մասը բաղկացած է 2 դարակներից և ցածր մետաղական ձողից՝ շապիկների համար: Բոլոր բաց մասերը փակված են եզրաժապա-վենով:Երկրորդ վերևի կտորը ունի երկու փակ դուռ և մեկ դարակ: Ունի 4 բռնակներ՝ եվրոպական արտադրու-թյան, մետաղյա; Մանեկահեղյուսային միացումները եվրոպական արտադրության, չերևացող: Ետնամասը ծածկված է լամինացված ԴՎՊ-ով: Ծխնիները եվրոպական արտադրության: ըստ ներկայացված գծագրի: **Գրասեղան 3 հատ** - Պատրաստված է 18մմ հաստությամբ լամինացված ՓՏՍ-ից: Սեղանի չափերը 110 x60 x75 սմ: Սեղանը ունի 1 զզրոց: Գզրոցը վերևի մասում ունի շարժական դարակ, որի մեխանիզմը եվրոպական արտադրության սահուղիով է, ունի 1 դուռ իր 1 դարակով: Գզրոցի հետևի պատը լամինացված ԴՎՊ –ով է: Բոլոր բաց եզրերը եզրապատված են ՊՎՍ-ով: Մանեկահեղյուսային միացումները եվրոպական արտադրության են և չերևացող, 2	հատ	219000	1314000	6	***ք. Երևան, Ծարավ աղբյուրի 55 ա***	6	օգոստոս-սեպտեմբեր 2019 թ.

				բռնակները մետաղյա են և խրոմապատ: ըստ ներկայացված գծագրի: **սեղան 1 հատ** - Պատրաստված է 18մմ հաստությամբ բարձրորակ լամինացված ՓՏՍ-ից: Սեղանի չափերը 80 x80 x75 սմ: Սեղանի 4 ոտքերը իրար են միացված միջնապատով և 4 հատ 10սմ գոտիներով: Բոլոր եզրերը եզրապատված են ՊՎՍ-ով: Ոտքերը բարձրորակ լամինացված ՓՏՍ -ից են, անկյունային 7 սմ լայնությամբ իրար միացվող անկյունակներով: ըստ ներկայացված գծագրի: **Կախիչ 1 հատ** - Պատրաստված է 18մմ հաստությամբ բարձորակ լամինացված ՓՏՍ-ից: Չափերը՝ 90 x30 x160 սմ 18 մմ հաստությամբ: Կախիչը ունի 2 բաց դարակ՝ վերևի և ներքևի. 4 հատ հագուստի կախիչ, որոնք երկաթից են և խրոմապատ: Բոլոր բաց եզրերը եզրապատված են ՊՎՍ-ով: Մանեկահեղյուսային միացումները չերևացող են: ըստ ներկայացված գծագրի. **Ամբողջ կահույքը լինի միագույն, /գույնի նմուշը կտրամադրի պատվիրատուն՝ բաց շականակագույն:**							
8	39141170/6	3 տեղանոց ննջասենյակի կահույք - 4-րդ տարբերակ	<<	**Զգեստապահարան 3 հատ** - Ընդհանուր չափերը 2 մ 10սմ x 90 սմ x 60 սմ բաղկացած է 2 կտորից 155 x90 x60 սմ և 55x 90 x60 սմ: Պատրաստված է 18 մմ լամինացված ՓՏՍ –ից,երևացող եզրերը եզրապատված՝ ՊՎՍ-ով: Առաջին կտորը 2 դռնանի է և բաժանված է 2 մասի: Առաջին մասում կա մետաղական ձող հագուստը կախելու	հատ	228990	2289900	10	*ք. Երևան, Ծարավ աղբյուրի 55 ա*	10	օգոստոս-սեպտեմբեր 2019 թ.

				համար, երկրորդ մասը բաղկացած է 2 դարակներից և ցածր մետաղական ձողից՝ շապիկների համար: Բոլոր բաց մասերը փակված են եզրաժապավեն-ով:Երկրորդ վերևի կտորը ունի երկու փակ դուռ և մեկ դարակ: Ունի 4 բռնակներ՝ եվրոպական արտադրության, մետաղյա; Մանեկահեղյուսային միացումները եվրոպական արտադրության, չերևացող: Ետնամասը ծածկված է լամինացված ԴՎՊ-ով: Ծխնիները եվրոպական արտադրության: ըստ ներկայացված գծագրի: **Գրասեղան 3 հատ** - Պատրաստված է 18մմ հաստությամբ լամինացված ՓՏՍ-ից: Սեղանի չափերը 110 x60 x75 սմ: Սեղանը ունի 1 գզրոց: Գզրոցը վերևի մասում ունի շարժական դարակ, որի մեխանիզմը եվրոպական արտադրության սահուղիով է, ունի 1 դուռ իր 1 դարակով: Գզրոցի հետևի պատը լամինացված ԴՎՊ –ով է: Բոլոր բաց եզրերը եզրապատված են ՊՎՍ-ով: Մանեկահեղյուսային միացումները եվրոպական արտադրության են և չերևացող, 2 բռնակները մետաղյա են և խրոմապատ: ըստ ներկայացված գծագրի: **սեղան 1 հատ** - Պատրաստված է 18մմ հաստությամբ բարձրորակ լամինացված ՓՏՍ-ից: Սեղանի չափերը 80x80x75 սմ: Սեղանի 4 ոտքերը իրար են միացված միջնապատով և 4 հատ 10սմ գոտիներով: Բոլոր եզրերը եզրապատված են ՊՎՍ-ով: Ոտքերը բարձրորակ լամինացված ՓՏՍ -ից են, անկյունային 7 սմ լայնությամբ իրար միացվող անկյունակներով: ըստ							

				ներկայացված գծագրի: **Կախիչ 1 հատ** - Պատրաստված է 18մմ հաստությամբ բարձորակ լամինացված ՓՏՍ-ից: Չափերը՝ 90 x30 x160 սմ 18 մմ հաստությամբ: Կախիչը ունի 2 բաց դարակ՝ վերևի և ներքևի. 4 հատ հագուստի կախիչ, որոնք երկաթից են և խրոմապատ: Բոլոր բաց եզրերը եզրապատված են ՊՎՍ-ով: Մանեկահեղյուսային միացումները չերևացող են: ըստ ներկայացված գծագրի: **Կողապահարան 3 հատ** - Պատրաստված է 18մմ հաստությամբ լամինացված ՓՏՍ-ից: Չափերը՝ 45x40x50 սմ: Բոլոր բաց կողերը եզրապատված են ՊՎՍ-ով, ունի 1 բաց դարակ: Բոլոր միացումները չերևացող հեղյուսամանեկային միացումներով են: ըստ ներկայացված գծագրի: **Ամբողջ կահույքը լինի միագույն, /գույնի նմուշը կտրամադրի պատվիրատուն՝ բաց շականակագույն:**							
9	39141170/7	3 տեղանոց ննջասենյակի կահույք – 5-րդ տարբերակ	<<	**Զգեստապահարան 3 հատ** - Ընդհանուր չափերը 2 մ 10սմ x 90 սմ x 60 սմ բաղկացած է 2 կտորից 155 x90 x60 սմ և 55x 90 x60 սմ: Պատրաստված է 18 մմ լամինացված ՓՏՍ –ից,երևացող եզրերը եզրապատված՝ ՊՎՍ-ով: Առաջին կտորը 2 դռնանի է և բաժանված է 2 մասի: Առաջին մասում կա մետաղական ձող հագուստը կախելու համար, երկրորդ մասը բաղկացած է 2 դարակներից և ցածր մետաղական ձողից՝ շապիկների համար: Բոլոր բաց մասերը փակված են եզրաժապա-վենով: Երկրորդ վերևի կտորը ունի երկու փակ դուռ և մեկ դարակ: Ունի 4 բռնակներ՝ եվրոպական արտադրու-	հատ	226000	6780000	30	*ք. Երևան, Ծարավ աղբյուրի 55 ա*	30	օգոստոս-սեպտեմբեր 2019 թ.

				թյան, մետաղյա; Մանեկահեղյուսային միացումները եվրոպական արտադրության, չերևացող: Ետնամասը ծածկված է լամինացված ԴՎՊ-ով: Ծխնիները եվրոպական արտադրության: ըստ ներկայացված գծագրի: **Գրասեղան 3 հատ** - Պատրաստված է 18մմ հաստությամբ լամինացված ՓՏՍ-ից: Սեղանի չափերը 110 x60 x75 սմ: Սեղանը ունի 1 զզրոց: Գզրոցը վերևի մասում ունի շարժական դարակ, որի մեխանիզմը եվրոպական արտադրության սահուղիով է, ունի 1 դուռ իր 1 դարակով: Գզրոցի հետևի պատը լամինացված ԴՎՊ –ով է: Բոլոր բաց եզրերը եզրապատված են ՊՎՍ-ով: Մանեկահեղյուսային միացումները եվրոպական արտադրության են և չերևացող, 2 բռնակները մետաղյա են և խրոմապատ: ըստ ներկայացված գծագրի: **սեղան 1 հատ** - Պատրաստված է 18մմ հաստությամբ բարձրորակ լամինացված ՓՏՍ-ից: Սեղանի չափերը 80x80x75 սմ: Սեղանի 4 ոտքերը իրար են միացված միջնապատով և 4 հատ 10սմ գոտիներով: Բոլոր եզրերը եզրապատված են ՊՎՍ-ով: Ոտքերը բարձրորակ լամինացված ՓՏՍ -ից են, անկյունային 7 սմ լայնությամբ իրար միացվող անկյունակներով: ըստ ներկայացված գծագրի: **Կախիչ 1 հատ** - Պատրաստված է 18մմ հաստությամբ բարձորակ լամինացված ՓՏՍ-ից: Չափերը՝ 90 x30 x160 սմ 18 մմ հաստությամբ: Կախիչը ունի 2 բաց դարակ՝ վերևի և ներքևի. 4 հատ հագուստի կախիչ, որոնք							

				երկաթից են և խրոմապատ: Բոլոր բաց եզրերը եզրապատված են ՊՎՍ-ով: Մանեկահեղյուսային միացումները չերևացող են: ըստ ներկայացված գծագրի: **Կողապահարան 2 հատ -** Պատրաստված է 18մմ հաստությամբ լամինացված ՓՏՍ-ից: Չափերը՝ 45x40x50 սմ: Բոլոր բաց կողերը եզրապատված են ՊՎՍ-ով, ունի 1 բաց դարակ: Բոլոր միացումները չերևացող հեղյուսամանեկային միացումներով են: ըստ ներկայացված գծագրի: **Ամբողջ կահույքը լինի միագույն, /գույնի նմուշը կտրամադրի պատվիրատուն՝ բաց շականակագույն:**							
10	39141170/8	2 տեղանոց ննջասենյակի կահույք – 1-ին տարբերակ	<<	**Զգեստապահարան 2 հատ -** Ընդհանուր չափերը 2 մ 10սմ x 90 սմ x 60 սմ բաղկացած է 2 կտորից 155 x90 x60 սմ և 55x 90 x60 սմ: Պատրաստված է 18 մմ լամինացված ՓՏՍ –ից,երևացող եզրերը եզրապատված՝ ՊՎՍ-ով: Առաջին կտորը 2 դռնանի է և բաժանված է 2 մասի: Առաջին մասում կա մետաղական ձող հագուստը կախելու համար, երկրորդ մասը բաղկացած է 2 դարակներից և ցածր մետաղական ձողից՝ շապիկների համար: Բոլոր բաց մասերը փակված են եզրաժապա-վենով: Երկրորդ վերևի կտորը ունի երկու փակ դուռ և մեկ դարակ: Ունի 4 բռնակներ՝ եվրոպական արտադրու-թյան, մետաղյա; Մանեկահեղյուսային միացումները եվրոպական արտադրության, չերևացող: Ետնամասը ծածկված է լամինացված ԴՎՊ-ով: Ծխնիները եվրոպական արտադրության: ըստ ներկայացված գծագրի:	հատ	149880	11990400	80	*ք. Երևան, Ծարավ աղբյուրի 55 ա*	80	օգոստոս-սեպտեմբեր 2019 թ.

				Գրասեղան 2 հատ - Պատրաստված է 18մմ հաստությամբ լամինացված ՓՏՍ-ից: Սեղանի չափերը 110 x60 x75 սմ: Սեղանը ունի 1 գզրոց: Գզրոցը վերևի մասում ունի շարժական դարակ, որի մեխանիզմը եվրոպական արտադրության սահուդիով է, ունի 1 դուռ իր 1 դարակով: Գզրոցի հետևի պատը լամինացված ԴՎՊ –ով է: Բոլոր բաց եզրերը եզրապատված են ՊՎՍ-ով: Մանեկահեղյուսային միացումնե-րը եվրոպական արտադրության են և չերևացող, 2 բռնակները մետաղյա են և խրոմապատ: ըստ ներկայացված գծագրի: **սեղան 1 հատ** - Պատրաստված է 18մմ հաստությամբ բարձրորակ լամինաց-ված ՓՏՍ-ից: Սեղանի չափերը 80x80x75 սմ: Սեղանի 4 ոտքերը իրար են միացված միջնապատով և 4 հատ 10սմ գոտիներով: Բոլոր եզրերը եզրապատված են ՊՎՍ-ով: Ոտքերը բարձրորակ լամինացված ՓՏՍ -ից են, անկյունային 7 սմ լայնությամբ իրար միացվող անկյունակներով: ըստ ներկայացված գծագրի: **Կախիչ 1 հատ** - Պատրաստված է 18մմ հաստությամբ բարձորակ լամինացված ՓՏՍ-ից: Չափերը՝ 90 x30 x160 սմ 18 մմ հաստությամբ: Կախիչը ունի 2 բաց դարակ՝ վերևի և ներքևի. 4 հատ հագուստի կախիչ, որոնք երկաթից են և խրոմապատ: Բոլոր բաց եզրերը եզրապատված են ՊՎՍ-ով: Մանեկահեղյուսային միացումները չերևացող են: ըստ ներկայացված գծագրի: **Կողապահարան 2 հատ** - Պատրաստված է 18մմ հաստությամբ լամինացված ՓՏՍ-ից: Չափերը՝ 45x40x50 սմ: Բոլոր բաց կողերը							

				եզրապատված են ՊՎՍ-ով, ունի 1 բաց դարակ: Բոլոր միացումները չերևացող հեղյուսամանեկային միացումներով են: ըստ ներկայացված գծագրի: **Ամբողջ կահույքը լինի միագույն, /գույնի նմուշը կտրամադրի պատվի-րատուն՝ բաց շականակագույն:**							
11	39141170/9	2 տեղանոց ննջասենյակի կահույք – 2-րդ տարբերակ	<<	**Զգեստապահարան 2 հատ -** Ընդհանուր չափերը 2 մ 10սմ x 90 սմ x 60 սմ բաղկացած է 2 կտորից 155 x90 x60 սմ և 55x 90 x60 սմ: Պատրաստված է 18 մմ լամինացված ՓՏՍ –ից,երևացող եզրերը եզրապատված՝ ՊՎՍ-ով: Առաջին կտորը 2 դռնանի է և բաժանված է 2 մասի: Առաջին մասում կա մետաղական ձող հագուստը կախելու համար, երկրորդ մասը բաղկացած է 2 դարակներից և ցածր մետաղական ձողից՝ շապիկների համար: Բոլոր բաց մասերը փակված են եզրաժապավե-նով: Երկրորդ վերևի կտորը ունի երկու փակ դուռ և մեկ դարակ: Ունի 4 բռնակներ՝ եվրոպական արտադրու-թյան, մետաղյա; Մանեկահեղյուսային միացումները եվրոպական արտադ-րության, չերևացող: Ետնամասը ծածկված է լամինացված ԴՎՊ-ով: Ծխնիները եվրոպական արտադրու-թյան: ըստ ներկայացված գծագրի:: **Գրասեղան 2 հատ -** Պատրաստված է 18մմ հաստությամբ լամինացված ՓՏՍ-ից: Սեղանի չափերը 110 x60 x75 սմ: Սեղանը ունի 1 զզրոց: Գզրոցը վերևի մասում ունի շարժական դարակ, որի մեխանիզմը եվրոպական արտադրության սահուղիով է, ունի 1 դուռ իր 1 դարակով: Գզրոցի հետևի պատը լամինացված ԴՎՊ –ով է: Բոլոր բաց եզրերը եզրապատված են ՊՎՍ-	հատ	137900	1654800	12	*ք. Երևան, Ծարավ աղբյուրի 55 ա*	12	օգոստոս-սեպտեմբեր 2019 թ.

				ով: Մանեկահեղյուսային միացումները եվրոպական արտադրության են և չերևացող, 2 բռնակները մետաղյա են և խրոմապատ: ըստ ներկայացված գծագրի: **Կախիչ 1 հատ** - Պատրաստված է 18մմ հաստությամբ բարձորակ լամինացված ՓՏՄ-ից: Չափերը՝ 90 x30 x160 սմ 18 մմ հաստությամբ: Կախիչը ունի 2 բաց դարակ՝ վերևի և ներքևի. 4 հատ հագուստի կախիչ, որոնք երկաթից են և խրոմապատ: Բոլոր բաց եզրերը եզրապատված են ՊՎՍ-ով: Մանեկահեղյուսային միացումները չերևացող են: ըստ ներկայացված գծագրի: **Ամբողջ կահույքը լինի միագույն, /գույնի նմուշը կտրամադրի պատվիրատուն՝ բաց շականակագույն:**							

ԳՆՈՐԴ
«ԵՊՀ» հիմնադրամ
ք. Երևան, Ալեք Մանուկյան 1
«Արդշինբանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 01506928
Հ/Հ 247010000906
պրոռեկտոր՝ Ա. Մալխասյան

(ստորագրություն)
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
Արգավանդ Կահույք ՍՊԸ
ՀՀ ք.Երևան, Անդրանիկի 129, բն. 4
“Հայէկոնոմբանկ“ ԲԲԸ Մետաքս Մ/Ճ
Հ/Հ 163218020242
ՀՎՀՀ 01261634
տնօրեն՝ Վ. Նարիբեկյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
«24» հուլիսի 2019 թ. կնքված
«ԵՊՀ-ԳՀԱՊՁԲ-19/117» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ապրանքի					
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասա-կարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**		
			օգոստոս	սեպտեմբեր	Ընդամենը
1	39141170/1	Մահճակալ	3271530	6543060	6543060
3	39111140/1	Աթոռ	2749200	5498400	5498400
5	39141170/3	3 տեղանոց ննջասենյակի կահույք – 1-ին տարբերակ	210000	420000	420000
6	39141170/4	3 տեղանոց ննջասենյակի կահույք - 2-րդ տարբերակ	219900	439800	439800
7	39141170/5	3 տեղանոց ննջասենյակի կահույք – 3-րդ տարբերակ	657000	1314000	1314000
8	39141170/6	3 տեղանոց ննջասենյակի կահույք - 4-րդ տարբերակ	1144950	2289900	2289900
9	39141170/7	3 տեղանոց ննջասենյակի կահույք – 5-րդ տարբերակ	3390000	6780000	6780000
10	39141170/8	2 տեղանոց ննջասենյակի կահույք – 1-ին տարբերակ	5995200	11990400	11990400
11	39141170/9	2 տեղանոց ննջասենյակի կահույք – 2-րդ տարբերակ	827400	1654800	1654800

ԳՆՈՐԴ
«ԵՊՀ» հիմնադրամ
ք. Երևան, Ալեք Մանուկյան 1
«Արդշինբանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 01506928
Հ/Հ 247010000906
պրոռեկտոր՝ Ա. Մալխասյան

(ստորագրություն)
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
Արգավանդ Կահույք ՍՊԸ
ՀՀ ք.Երևան, Անդրանիկի 129, բն. 4
“Հայէկոնոմբանկ“ ԲԲԸ Մետաքս Մ/Ճ
Հ/Հ 163218020242
ՀՎՀՀ 01261634
տնօրեն՝ Վ. Նարիբեկյան

/ստորագրություն/
Կ.Տ